ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Տեսէք, ինչպէս են սոքա ճիգ թափում հանգցընել ճրագն,
Որ լոյս է սրփռում մեր խաւար կեանքում.
Դուք, խելօք մարդիկ, ասացէք ինչ է ձեր նպատակն
Եւ ինչ բանի էք դուք այդպէս ձրգտում։

Պատանեկան ոգևորութեան արծուի թռուիչքներ,
Լուսաւորութեան առողջ գաղափար
Եւ հասունացած երիտասարդի յոյս, եռանդ, գործեր—
Ծաղրը ու ծանակ դարձան ձեզ համար!

Բայց դիտեմ. ում մէջ բընաւ մեռած է խըղճի ազնիւ ձայն,
Ում անծանօթ են բարձրը միտումներ,
Նա ամենայն տեղ ամեն ժամանակ տեսնում է միայն
Կեղծիք, էգոյիզմ, անձնական շահեր։

Սակայն զուր է այդ։ Ահա տեսնում եմ ես իմ առաջին
Նորակազմ, կարող մի թարմ բազմութիւն,
Որ անահ, անշեղ դիմում է վրսեմ իւր նպատակին.
Անընկճելի է նորա զօրութիւն!

Էջմիածին, 1893 թ., մարտի 11.